# Ֆինանսական միջնորդների շրջանակ (FIF) – ԱԿԲԱ բանկ ՄՓՄՁ վարկ

| | |
|---|---|
| **Երկիր** | **ՀԱՅԱՍՏԱՆ** |
| **Ծրագրի համարը** | **54831** |
| **Բիզնես ոլորտ:** | **Բանկային** |
| **Պետական/մասնավոր** | **ՄԱՍՆԱՎՈՐ** |
| **Բնապահպանական կատեգորիա** | **ՖՀ** |
| **Հաստատման նախատեսված ամսաթիվը** | **8-ը օգոստոսի, 2023թ.** |
| **Կարգավիճակը** | **Հաստատված** |
| **Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը** | **14-ը օգոստոսի, 2023թ.** |

## Ծրագրի նկարագրություն

Ֆինանսական միջնորդների շրջանակում (FIF) Հայաստանի միկրո, փոքր և միջին մասնավոր ձեռնարկությունների (ՄՓՄՁ) ֆինանսավորման համար Ակբա բանկին մինչև 15 մլն ԱՄՆ դոլարի չափով առանց գրավի առաջնային վարկի տրամադրում:

## Ծրագրի նպատակները

Ծրագիրը կմեծացնի Հայաստանի մասնավոր հատվածում զբաղվածության հիմնական աղբյուրն ու տնտեսության խթանը հանդիսացող ՄՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիությունը: Վարկը հնարավորություն կտա ԱԿԲԱ բանկին ընդլայնել իր ֆոնդերի հասանելիությունը և բավարարել ՓՄՁ-ներին տեղական արժույթով տրամադրվող ավելի երկարաժամկետ ֆինանսավորման առկա պահանջարկը: Վարկերի տրամադրման և նոր ՄՓՄՁ հաճախորդների ներգրավման համար կթիրախավորվեն նաև մայրաքաղաքից դուրս գտնվող մարզերը:

## Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Վաղ անցումային շրջանի վրա ազդեցության ցուցանիշը: 60

Ծրագիրն ուղղված է ՎԶԵԲ ֆինանսական միջնորդների շրջանակի նպատակների իրականացմանը՝ կիրառելով մրցակցային և ճկուն անցումային մոտեցումներ:

**Մրցակցային-** Ծրագրի աջակցությամբ ԱԿԲԱ բանկը վարկավորում է Հայաստանում ֆինանսավորման կարիք ունեցող մասնավոր ՓՄՁ-ներին՝ բազմապատկելով ՎԶԵԲ -ի կողմից տրամադրված ֆինանսավորումը որոշակի գործակցով: Ծրագիրն ուղղված է մարզերին և ՓՄՁ նոր հաճախորդների ներգրավմանը:

**Ճկուն-** Ֆինանսական համաձայնագրերին և պորտֆելի որակի գործակիցներին համապատասխանելու պահանջները կնպաստեն հաստատության ճկունությանը:

## Հաճախորդը

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

ԱԿԲԱ բանկը ՎԶԵԲ-ի երկարաժամկետ գործընկերն է: 2023թ. առաջին եռամսյակի տվյալներով այն հանդիսանում է Հայաստանում 4-րդ խոշորագույն բանկը ընդհանուր ակտիվների և զուտ վարկային պորտֆելի մասով, որոնք կազմում են շուկայի համապատասխանաբար 8% և 11% -ը:

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

15,000,000.00 ԱՄՆ դոլար

## Ծրագրի ընդհանուր արժեքը

15,000,000.00 ԱՄՆ դոլար

## Բնապահպանական եվ սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է ՖՀ (FI) կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն –ԲՍՔ 2019): ԱԿԲԱ բանկի կատարողականն անցյալում և գործող վարկերի գծով մինչ օրս ներկայացրած տարեկան բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) հաշվետվությունները գնահատվել են բավարար: ԱԿԲԱ բանկից կպահանջվի շարունակել համապատասխանել Գործունեության 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին և ՎԶԵԲ-ի կորպորատիվ, ՓՄՁ և միկրո վարկերի բնապահպանական և սոցիալական ընթացակարգերին, ինչպես նաև Առևտրի խթանման ծրագրի (TFP) բնապահպանական և սոցիալական ընթացակարգերին և ՎԶԵԲ-ին ներկայացնի բնապահպանական և սոցիալական տարեկան զեկույցներ:

## Տեխնիկական համագործակցություն

***Տեխնիկական համագործակցություն-*** *առկա չէ*

***Ոչ տեխնիկական համագործակցություն-*** Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամի (EFSD+) կողմից ծրագրին կտրամադրվեն երաշխիքներ:

## Հավելյալություն

**Ֆինանսավորման կառուցվածքը-** ՎԶԵԲ-ն առաջարկում է շուկայում ոչ հասանելի ժամկետներով և պայմաններով ֆինանսավորում (օրինակ՝ շուկայում առկա միջինից ավելի երկար ժամկետ և արտոնյալ ժամանակահատված), ինչն անհրաժեշտ է ծրագիրը նախագծելու և իրականացնելու համար:

**Ստանդարտների սահմանում**- ԱԿԲԱ բանկը կօգտվի ՎԶԵԲ-ի՝ առավել բարձր ֆինանսական չափանիշների կիրառման փորձից: ԱԿԲԱ-ն կհետևի ենթավարկառուների համապատասխանության հստակ սահմանված չափորոշիչներին, ՎԶԵԲ բնապահպանական և սոցիալական ստանդարտներին, կհամապատասխանի ֆինանսական համաձայնագրերի և հաշվետվությունների ներկայացման պահանջներին՝ նպաստելով բանկի ներսում ֆինանսական կայունությանը և ռիսկերի պատշաճ կառավարմանը:

## Ընկերության կոնտակտային տվյալները

Անժելիկա Բաղրամյան
Anzhelika.Baghramyan@acba.am
+ 374 10 31 8888
www.acba.am
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Արամի փող. 82-84